ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «8» օգոստոսի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 8-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39Ա հասցեում, տեղի ունեցավ ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արամայիս	Մկրտչյան	Գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի գնահատող անդամ.
Գայանե	Գևորգյան	Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամ.
Կարինե	Բաղդասարյան	Գնահատող հանձնաժողովի բացող անդամ.
Սյուզաննա	Մկրտչյան	Գնահատող հանձնաժողովի բացող անդամ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արամայիս Մկրտչյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Անի Բազեյանը՝ հայտնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի/ների/ ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բոլոր մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Գնահատականը
1.	«Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Բավարար

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ՀԽԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մկրտչյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Գ. Գևորգյան _____

Կ. Բաղդասարյան _____

Ս. Մկրտչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____